ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4546/02/24 ք. Երևան
22 Հուլիս 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Ա.Օհանյան) (այսուհետ նաև՝ Դատարան) քննության առնելով ըստ հայցի <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ի միջև 29.03.2024 թվականին կնքված թիվ N <<ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ>> ծածկագրով պայմանագրի 06.06.2024 թվականի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես 06.06.2024 թվականի միակողմանի լուծման անվավերության հետևանք՝ ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով բողոքի շրջանակներում <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելն արգելելու պահանջի մասին մասին հա. ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Թիվ ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ>> միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

1. <u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

12.06.2024 թվականին <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ի միջև 29.03.2024 թվականին կնքված թիվ N <<ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ>> ծածկագրով պայմանագրի 06.06.2024 թվականի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և որպես 06.06.2024 թվականի միակողմանի լուծման անվավերության հետևանք՝ ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով բողոքի շրջանակներում <<ԱՍՏԻՃԱՆ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելն արգելելու պահանջի մասին:

12.06.2024 թվականին հա. ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործը մակագրվել է Դատարանի դատավոր Ե.Եսոյանին:

19.06.2024 թվականի Դատարանի դատավոր Ե.Եսոյանի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են Հայցվորին:

Ընկերության ներկայացուցչի կողմից եռօրյա ժամկետում հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

19.06.2024 թվականին հա. ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործը մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է 19.06.2024 թվականին:

24.06.2024 թվականին Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործի քննությունը դատական նիստով իրականացնելու մասին >> որոշում է կայացրել:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀՀ) քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125 հոդվածով սահմանված կարգով Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու>> Դատարանի որոշումը և իրավունքների ու պարտականությունների պարզաբանմամբ գրությունները ուղարկել է կողմերին:

01.07.2024 թվականին պատասխանող ՀՀ տարածքային կառավարման

և ենթակառուցվածքների նախարարությունը ներկայացրել է հայցադիմումի պատասխան:

11.07.2024 թվականին Դատարանի գրասենյակ է մուտք եղել պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Թիվ ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ>> միջնորդությունը (այսուհետ նաև՝ Միջնորդություն):

16.07.2024 թվականին Միջնորդության քննարկումն ավարտվել է և դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 22.07.2024 թվականը:

2. <u>Միջնորդություն ներկայացնողի իրավական դիրքորոշումը.</u>

11.07.2024 թվականին Դատարանի գրասենյակ է մուտք եղել պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Թիվ ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ>> միջնորդությունը, որով հայտնվել է. **(մեջբերման սկիզբ)**

<<(...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացնում ենք սույն միջնորդությունը հետևյալ հիմնավորումներով.

Հաշվի առնելով Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+700 հատվածի ռազմավարական նշանակությունը և անբարեկարգ վիճակը, որի հետևանքով չի ապահովվում երթևեկության անվտանգությունը ու հարմարավետությունը, անհրաժեշտ է եղել շուտափույթ միջոցներ ձեռնարկել տվյալ ճանապարհահատվածը հիմնանորոգելու համար: Նախատեսված շինարարական աշխատանքները հնարավորինս շուտ և բարենպաստ եղանակային պայմաններում կատարելու և երթևեկության անվտանգությունը ու երթևեկության մասնակիցների հարմարավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է եղել հրատապ բաց մրցույթի եղանակով իրականացնել տվյալ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացը և հնարավորինս շուտ մեկնարկել շինարարական աշխատանքները:

Շինարարական աշխատանքների մեկնարկից հետո պարզվել է, որ տվյալ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող <<Աստիճան>> ՍՊ ընկերությունը ներկայացրել է ընկերությունում որպես աշխատակից չգրանցված և այլ աշխատանքներում ներգրավված մասնագետների տվյալներ, ինչը տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական-բնութագրի խորհրդատուի անձնակազմին ներկայացվող պահանջների խախտում է:

Տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական-բնութագրի խորհրդատուի անձնակազմին ներկայացվող պահանջներ բաժնի համաձայն՝ հիմնական անձնակազմը պետք է ունենա ամբողջական ներգրավածություն ծառայությունների ողջ ժամանակահատվածի համար: Տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրի 2.1.3 կետի <<ա>> ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքը՝ ՏԿԵ նախարարությունը նախաձեռնել է տվյալ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող <<Աստիճան>> ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց: Միաժամանակ, հաշվի առնելով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման մասով առաջացած խնդիրը, ՏԿԵ նախարարությունը մինչև առաջացած խնդրին լուծում տալը

ժամանակավորապես դադարեցրել է շինարարական աշխատանքները:

Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածի հիմնանորոգման ծրագրով այս պահին մասամբ իրականացվել են միայն մայթերի կառուցման աշխատանքների մի մասը, իսկ ճանապարհահատվածի երթևեկամասի հիմնանորոգման մասով աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, որի հետևանքով տվյալ ճանապարհահատվածով երթևեկությունը օր օրի դառնում է վտանգավոր, հետևաբար անհրաժեշտ է հնարավորինս օր առաջ ապահովել <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջը և շարունակել շինարարական աշխատանքները:

Հաշվի առնելով, որ հանրապետական նշանակության ճանապարհները կապում են հանրապետության քաղաքները մայրաքաղաքի և միմյանց, մշակութային, հոգևոր կենտրոնների և միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հետ, դրանց երթևեկության ինտենսիվությունը բավականին բարձր է, ուստի այդ ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների դադարը խաթարում է երկրի տնտեսական բնականոն գործունեությունը:

Բացի այդ, անբարեկարգ վիճակը չի ապահովվում երթևեկության անվտանգությունը, բարձրանում է ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման հնարավորությունը: Տարեկան ավելի քան 300 մարդ է մահանում Հայաստանի ճանապարհներին ավտովթարների պատճառով: Բոլորիս պատասխանատվությունն է կանխել այս դեպքերը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածով ամրագրված է կյանքի իրավունքը որպես մարդու անքակտելի և անօտարելի իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է պետություններին ոչ միայն զերծ մնալ դիտավորությամբ և անօրինական կերպով մահ պատճառելուց, այլև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու

համար (<<Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի>> [ՄՊ], § 130): Լայն առումով այս պոզիտիվ պարտավորությունն ունի երկու տարր, այն է՝ ա) ստեղծել համապատասխան նորմատիվային դաշտ և բ) ձեռնարկել գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետությունների վրա դրված իրենց իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտավորությունն առկա է ցանկացած գործունեության կոնտեքստում (անկախ դրա պետական կամ ոչ պետական լինելու հանգամանքից), որի շրջանակներում կյանքի իրավունքը կարող է վտանգվել (<<Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի>> [ՄՊ], § 130):

Դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության պոզիտիվ պարտավորությունն առկա է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ առողջապահություն (<<Կալվելին և Չիյոն ընդդեմ Իտալիայի>> [ՄՊ], <<Վոն ընդդեմ Ֆրանսիայի>> [ՄՊ]), վտանգավոր գործունեություն, ներառյալ՝ արդյունաբերական կամ բնապահպանական աղետները (<<Յոներիլդիզն ընդդեմ Թուրքիայի>> [ՄՊ], <<Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի>>, <<Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի>>, <<Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի>>, <<Մ. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի>>), միջադեպեր, որոնք տեղի են ունենում նավի վրա (<<Լըրեյը և այլք ընդդեմ Ֆրանսիայի>> (որոշ.)), գնացքում (<<Քալենդերն ընդդեմ Թուրքիայի>>), շինհրապարակում (<<Պերեյրա Էնրիկեսն ընդդեմ Լյուքսեմբուրգի>>), խաղահրապարակում (<<Կոչեցկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության>> (որոշ.), § 26) կամ դպրոցական հաստատությունում (<<Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի>>), ճանապարհային անվտանգության ապահովում (<<Ռաջկովսկան ընդդեմ Լեհաստանի>> (որոշ.), <<Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի>>), արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայություններ (<<Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի>> (որոշ.)) կամ բաց ծովում սուզման աշխատանքների իրականացում (<<Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի>>), պետական հաստատություններում պահվող խոցելի անձանց մատուցվող բժշկական խնամքի և օգնության ծառայություններ (<<Նենչևան և այլք ընդդեմ Բուլղարիայի>>, <<Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումի նիայի>> [ՄՊ]), 16 • երբ պետությունը չի կարողացել պատշաճ կերպով ապահովել զինվորականների կողմից ականապատված գոտու անվտանգությունը (<<Փաշա և Էրքան Էրոլն ընդդեմ Թուրքիայի>>, <<Ալբեկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի>>) կամ չպայթած զինամթերքով պալիգոնի պահպանությունը և հսկողությունը (<<Օրուքն ընդդեմ Թուրքիայի>>) կամ երբ պետությունը բավարար արագությամբ չի արձագանքել կյանքի համար վտանգավոր հանգամանքներում անհետացման դեպքին (<<Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի>>, <<Դոդովն ընդդեմ Բուլղարիայի>>):

Արձանագրենք, որ համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտավորությունն առկա է նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում:

Ուստի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման, մարդկանց կյանքը և առողջությունը ապահովելու անհրաժեշտությունից, պետության տնտեսական բնականոն կյանքն ապահովելու, այսինքն՝ հանրային շահից ելնելով անհրաժեշտ է հրատապ՝ հնարավորինս սեղմ ժամկետում, իրականացնել ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, որը սակայն չի կարող իրականացվել առանց պատշաճ շինարարության տեխնիկական հսկողության՝ շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում իրականացվող աշխատանքների որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին համապատասխան իրականացնելու, անորակ շինարարության իրականացումը կանխելու նպատակով:

Գնման գործընթացի կասեցումը էական խոչընդոտ է այդ գործընթացի արագ կազմակերպման համար և խիստ վտանգավոր հանրային շահի ապահովման տեսանկյունից:

<<Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին>> որոշումը ստանալուց հետո թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ>> ծածկագրով գնման ընթացակարգը կասեցված է օրենքի ուժով:

Ուստի սույն միջնորդության բավարարմամբ խնդրում ենք վերացնել գնման գործընթացի կասեցումը՝ հնարավորություն տալով Պատվիրատուին հանրային շահի ապահովման, ներկայացված ռիսերի նվազեցման համար մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը խնդրին տալ ժամանակավոր լուծում՝ հրատապության հիմքով պայմանավորված՝ մեկ անձից գնման ընթացակարգի արդյունքում կնքել պայմանագիր՝ վերջինիս գործողության ժամկետը պայմանավորելով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելով:

Հաշվի առնելով, որ Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+700 հատվածի աշխատանքների իրականացման հետաձգումը տևական ժամանակով հաշվի առնելով, նաև դատական ակտերի վերադասության կարգով բողոքարկման ժամանակահատվածը կհանգեցնի բացասական և անդառնալի հետևանքների, ուստի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Խնդրում ենք

Բավարարել սույն գրավոր միջնորդությունը և վերացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված թիվ <<ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնման

գործընթացի կասեցումը: >> մեջբերման ավարտ:

16.07.2024 թվականին Միջնորդություն ներկայացնողի ներկայացուցիչը Միջնորդությունը պնդեց ամբողջությամբ և խնդրեց բավարարել այն:

3. <u>Միջնորդության վերաբերյալ Հայցվորի (ներկայացուցչի) իրավական դիրքորոշումը</u>:

Հայցվորը (ներկայացուցիչը) 16.07.2024 թվականին հրավիրված դատական նիստում չառարկեց Միջնորդության դեմ:

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6.-րդ հոդվածի՝

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

4. Դատարանը միևնույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն գլխով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն

անհապաղ հրապարակում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի՝

1. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

(...):

Տվյալ դեպքում 24.06.2024 թվականին Դատարանը <<<Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործի քննությունը դատական նիստով իրականացնելու մասին>> որոշում (այսուհետ նաև՝ Որոշում) է կայացրել:

Դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասով՝ Որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով պարզաբանել է. (մեջբերման սկիզբ)

<<(...):

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

(...)>>: (մեջբերման ավարտ):

24.06.2024 թվականին Որոշումը էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 2-րդ

մասի վկայակոչմամբ Պատասխանողի ներկայացուցիչը գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան այն հիմնավորմամբ, որ <<ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածի ճանապարհաշինարարության գործընթացը Դատարանի 24.06.2024թ. Որոշման հիման վրա, օրենքի ուժով, կասեցվել է, հետևաբար՝ երթևեկության անվտանգության ապահովման, մարդկանց կյանքը և առողջությունը ապահովելու անհրաժեշտությունից, պետության տնտեսական բնականոն կյանքն ապահովելու, այսինքն՝ հանրային շահից ելնելով անհրաժեշտ է հրատապ՝ հնարավորինս սեղմ ժամկետում, իրականացնել ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, որը **սակայն չի կարող իրականացվել առանց պատշաճ շինարարության տեխնիկական հսկողության՝** շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում իրականացվող աշխատանքների որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին համապատասխան իրականացնելու, անորակ շինարարության իրականացումը կանխելու նպատակով:

Այս առումով Դատարանն անդրադառնալով <<հանրային շահ>> հասկացության բովանդակության բացահայտմանը, արձանագրում է.

Իրավունքում <<շահ>> հասկացության դասակարգումը **հանրայինի** և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, **շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը**: Սակայն **հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:**

Տվյալ դեպքում հանրային շահը սպասարկող սուբյեկտի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով, և հանրային շահը իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու արդյունքում <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 6-րդ հոդվածի հիմքով **Հ-16,/Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածի** շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու

նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2024/2ՏՀ ծածկագրով **հրատապ բաց մրցույթ,** որով տվյալ ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով որոշվել է առաջարկել կնքել **Հ-16,/Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր:

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի՝

(...):

*2. Այն դեպքերում, երբ, **հանրային** կամ պաշտպանության և ազգային անվտանգության **շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը** <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա **կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում**: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:*

Տվյալ դեպքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախաձեռնել է տվյալ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող <<Աստիճան>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթաց, որը սույն քաղաքացիական գործի շրջանակներում վիճարկվում է: Պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ հաշվի առնելով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման մասով առաջացած խնդիրը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մինչև առաջացած խնդրին լուծում տալը ժամանակավորապես դադարեցրել է Հ-16,/Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածի շինարարական աշխատանքները, քանի որ առանց քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողության հնարավոր չէ իրականացնել համապատասխան շինարարական աշխատանքները:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝

առաջնայնություն տալով Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածում երթևեկության անվտանգության ապահովմանը, հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայմանի, այն է՝ հասարակության հետագա զարգացման համար բարեկարգ ճանապարհային հանգույցների ստեղծման կամ վերանորոգման հանգամանքին, ինչպես նաև կարևորելով պետության տնտեսական բնականոն կյանքի ապահովման անհարժեշտությունը, ինչը հնարավոր չէ իրականացնել առանց քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողության, Դատարանը գտնում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից կազմակերպված Հ-16, /Մ-5/ - Մեծամոր – ՀԱԷԿ - /Մ-5/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000-կմ 10+700 հատվածում ճանապարահաշինարարության գործընթացի, տվյալ դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողության մասով գնման գործընթացի կասեցումը, թեկուզ և ժամանակավորապես, չի բխում հանրային շահերից, քանի որ գնման գործընթացի կասեցման ողջ ժամանակահատվածում միջպետական վերոհիշյալ ճանապարահատվածի շինարարության գործընթացի կասեցմամբ կխախտվի տվյալ ճանապարհատվածով երթևեկող ինչպես քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքը, կխաթարվի ինչպես տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների բնականոն գործունեությունը, այնպես էլ պետական ենթակառուցվածքների աշխատանքային բնականոն ընթացքը, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը և վերացնել գնման գործընթացի կասեցումը:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ և 199-200-րդ հոդվածներով, Դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հա. ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ <<Թիվ ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով գնման գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ>> միջնորդությունը բավարարել.

1.1. Հա. ԵԴ2/4546/02/24 քաղաքացիական գործով Թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾԶԲ-2024/2ՏՀ ծածկագրով գնման գործընթացի կասեցումը

վերացնել:

2. Սույն որոշում անհապաղ ուղարկել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության, պաշտոնական էլեկտրոնային փոստի՝ secretariat@minfin.am հասցեին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2024.07.22 09:47:56 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am